ՀՀ, ք. Երևան
05.01.2024թ.

ՈՐՈՇՈՒՄ
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ»
Հիմնադրամի ռեկտորի

ՄԱՍՆԱԿՑԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով հետևյալ փաստերը.

- «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի 2023 թվականի կարիքների համար էլեկտրոնային աճուրդ գնման ձևով կազմակերպվել է «ՀՖԿՍՊԻ-ԷԱՃԱՊՁԲ-23/112» ծածկագրով գնման ընթացակարգը, որին հայտ են ներկայացրել «ԷԼ ԸՆԴ ԷԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 00522502, էլ. փոստ՝ haykLV@yandex.ru) և «ԳԱԳ-ՄԱՐԿ ԵՂԲԱՅՐՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ՀՎՀՀ՝ 04247081),
- «ԷԼ ԸՆԴ ԷԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտում արձանագրվել է հրավերի պահանջներին անհամապատասխանություն՝ մասնակցի կողմից ներկայացված հայտում թերի է լրացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1), և մասնակցին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը,
- Մասնակցի կողմից սահմանված ժամկետում շտկումը չի կատարվել և չի ներկայացվել ապրանքի շտկված ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1),
- Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում «ԷԼ ԸՆԴ ԷԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է և «ՀՖԿՍՊԻ-ԷԱՃԱՊՁԲ-23/112» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած, քանի որ վերոնշյալ ընթացակարգի բոլոր 11 (տասնմեկ) չափաբաժինների մասով վերջինս հանդիսացել է ցածր գին առաջարկած մասնակիցը (բացման և գնահատման նիստի արձանագրությունը կցվում է),

ԵՎ

Առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով, ինչպես նաև ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. «ԷԼ ԸՆԴ ԷԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար հիմքերը գնահատել բավարար:
2. «ԷԼ ԸՆԴ ԷԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տվյալները համապատասխան հիմքերով գրավոր ուղարկել լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՌԵԿՏՈՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Տ. ՍԻՄՈՆՅԱՆ